ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, այս տարի, մարտի 18—19 օրերին, Մայր Աթոռում հրավիրվեց ներքին թեմերի առաջնորդների, թեմական և եկեղեցական խորհուրդների ժողով, տնտեսական ընթացիկ տարվա առթիվ։

Մարտի 18-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, գումարվում է այդ համագումարը։

Նիստին ներկա են Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Արարատյան հայրապետական թեմի փոխանորդ գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը, թեմականներ արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Անդրեասյանը, Ս. Արևշատյանը, Պ. Պողոսյանը, Խ. Գուզուբաշյանը, Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյանը, թեմականի անդամ ատամնաբույժ Գ. Ադիլյանը, Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ և Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը և Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմական խորհրդի անդամ Գ. Գևորգյանը, Նոր Նախիջևանի եկեղեցական խորհրդի անդամներ Ներսես Խաղլամաշյանը և Եղիազար Պապոյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և թեմական խորհրդի անդամ Ս. Ավշյանը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և թեմականի անդամ Անդրանիկ Ղարամանյանը։

Ժողովը բացվում է Վեհափառ Հայրապետի տերունական աղոթքով և «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր» մաղթանքով։ Այնուհետև Նորին Ս. Օծությունը ողջունում է ներքին թեմերի առաջնորդների, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամների ներկայությունը խորհրդակցական սույն ժողովում և հաջողություն է մաղթում ժողովի աշխատանքներին։

Ապա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խոսում է արտասահմանյան իր հինգերորդ հովվապետական ուղևորության մասին, Ադդիս-Աբեբայում արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների հոգևոր պետերի խորհրդակցության Հայ Եկեղեցու մասնակցության մասին, Ադդիս-Աբեբայի հայ համայնքի ազգային-եկեղեցական կյանքի, ինչպես նաև Կահիրե, Փարիզ և Լոնդոն Իր այցելության ազգային-եկեղեցական և հայրենասիրական նշանակության մասին։

Փոքր դադարից հետո, ժողովի քննարկման են դրվում յուրաքանչյուր թեմի վարչական-տնտեսական և եկեղեցական կազմակերպչական աշխատանքների բարելավման հարցերը, որոնց շուրջ սկսվում է մտքերի փոխանակություն։

Մարտի 19-ին ժողովը շարունակում է իր աշխատանքները։

Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գ. Քեհյայանը ժողովին է ներկայացնում

Ներքին թեմերի խորհրդակցական ժողովի խմբանկարը

գլուխ առ գլուխ 1964 թվականի Մայր Աթոռի և ներքին թեմերի բյուջեների կատարողականը և 1965 թվականի նոր բյուջեների նախահաշիվները, որոնց շուրջ ևս կատարվում է մտքերի փոխանակություն։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գլուխ առ գլուխ քննում է 1964 թվականի կատարողականը, արձանագրելով իր գոհունակությունը և անելով մի շարք կարևոր դիտողություններ, հաջորդ տնտեսական տարվա առիթով։

Ժողովում հաստատվում է նաև ներկայացված 1965 թվականի նոր բյուջեն, մի շարք փոփոխություններով։

Ներքին թեմերի առաջնորդների, թեմական և եկեղեցական խորհուրդների միացյալ նիստն իր աշխատանքները ավարտում է մարտի 19-ին, ուրբաթ, գիշերվա ժամը 7-ին։

Ժողովի փակումը կատարում է Վեհափառ Հայրապետը, Իր գոհունակությունն ու օրհնությունը հայտնելով ներքին թեմերում կատարված եկեղեցա-կազմակերպչական, վարչական, տնտեսական լավ աշխատանքների համար։

Ժամը 8-ին, Վեհարանի սեղանատանը, նորին Ս. Օծությունը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել բոլոր թեմական առաջնորդներին, թեմական, եկեղեցական խորհուրդների անդամներին, Մայր Աթոռի միաբաններին։

Սեղանների շուրջ ստեղծվում է վանական ջերմ մթնոլորտ, բաժակներ են առաջարկվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, նրա արժանավոր Գահակալի կենաց արևշատության, Հայաստանյայց Եկեղեցու պայծառության համար։

Ելույթներ են ունենում գերաշնորհ Տ. Ասողիկ, Տ. Կոմիտաս, Տ. Պարգև, Տ. Մաշտոց, Տ. Հուսիկ, Տ. Վահան եպիսկոպոսները, Տ. Արսեն, Տ. Նարեկ, Տ. Մուշեղ վարդապետները, թեմականների անդամներ Ս. Ավշյանը, Գ. Գևորգյանը, Գ. Ադիլյանը, Պ. Պողոսյանը, Ն. Խաղլամաշիյանը, Ե. Պողոսյանը, Ա. Ղարամանյանը։

Ընդունելությունը վերջանում է գիշերվա ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Էջ Միածին ի Հօրէ» շարականով ու Տերունական աղոթքով։